նում էի եւ միշտ ուրախութեամբ էի լսում: Բայց երբ պատմում էր դեւերի, սատանաների, գրողների եւ դժոխքի մասին, — ես սարսափում էի, եւ աւելի շատ էի վախենում, երբ խօսում էր մեռելների մասին:

Իսկ երբ տատս մեռաւ, նրանից չէի վախենում: Նա խիստ հանգիստ կերպով պառկած էր դագաղի մէջ, կարծես քնած լինէր: Նրա դէմքը էլի այնպէս բարի էր, որպէս առաջ: Ես մտածում էի, թէ նա հրեշտակների մօտ կը գնայ, նրա համար, որ ինձ երբեք չէր ծեծում: Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղայ: Մայրս ասում էր, թէ նա մի օր գերեզմանից կը վերկենայ. ես ուրախանում էի:

Իմ մօրը կոչում էին Նիգեար: Դուք տեսե՞լ էք դեռ նոր բացուած մի ծաղիկ, որ թառամել էր իր կոկոնի մէջ, — այդ իմ մայրն էր: Խե՜ղճ կնիկ, ես երբեք չեմ կարող մոռանալ քո միշտ տխուր եւ գունաթափ դէմքը: Ինչու՞ դու ուրախ լինել կարող չէիր... Ինչու՞ այնպէս սպանուած էին քո գեղեցիկ աչքերը, որոնցից արտասուքը շատ քիչ էր պակասում...

Մայրս մի բարձրահասակ կին էր, նիհար եւ թոյլ կազմուածքով: Ոտքի վրայ նա միշտ հիւանդ էր, բայց երբեք չէր պառկում: «Ո՞վ պիտի պահէ իմ երեխաներին» — պատասխանում էր նա, երբ նրան ասում էին, թէ պէտք է փոքր-ինչ հանգստանալ, թէ պէտք է փոքր-ինչ կազդուրել սպառուած ուժերը: Ամբողջ օրը դադարում չունէր: Նա էր թխում մեր տան հացը, նա էր եփում կերակուրները, նա էր լուանում մեր շորերը, նա էր կարում եւ կարկատնում մեր հագուստը: Բայց տնային հոգսերը չէին, որ մաշում էին նրան, — նրա ցաւը սրտիցն էր... Ես այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմա հասկանում եմ...

Մեր գիւղում գովասանուած էր մօրս վարպետութիւնը կարելու եւ ձեւելու մէջ, բայց շատ քիչ էին վճարում նրա աշխատութիւնների համար: Շաբաթական մի քանի շահի հազիւ էր վաստակում, եւ նրանցով ապրում էինք: Տատիս մեռնելեն յետոյ տան հոգսը բոլորովին մնաց մօրս վրայ: Քոյրերս՝ Մարիամը եւ Մագթաղը, դեռ փոքրիկներ էին. դրանք աւելի խանգարում էին մօրս, քան թէ օգնում էին:

Մարիամը եւ Մագթաղը երկոորեակներ էին, այնքան նման միմեանց, որ ես շատ անգամ սխալւում էի մինը միւսից որոշել: Մայրս նրանց ճանաչելու համար կարել էր զանազան գոյներով գդակներ, — Մարիամինը կանաչ գոյնով, իսկ Մագթաղինը կարմիր: Ես դեռ յիշում եմ այն անմեղ կռիւները, որ ծագում էին այդ երկու հրեշտակների մէջ իրանց գդակների մասին: Պատճառները շատ ծիծաղելի էին, օրինակ, երբ Մարիամին սիրում էին, Մագթա-